

ԱՊՐԻԼ 2021

ԱՄՍԱԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ





1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ	4
1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում	5
1.2. Ջրաչափերի տեղադրում և փոխարինում	5
1.3. Ջրահեռացման համակարգ	6
1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում	7
1.5. Էներգահամակարգ	7
1.6. Մեքենա-մեխանիզմներ	8
2. Առևտրային տնօրինություններ	9
2.1. Բաժանորդների տվյալներ	10
2.2. Հասույթ	10
2.3. Գանձում	11
2.4. Դեբիտորական պարտքեր /Դրավաբանական վարչություն/	12
2.5. Ջրաչափեր	13
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում	14
3. Տեխնիկական տնօրինություն	15
3.1. Ջրամատակարարման շարունակականություն	16
3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում	17
3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ	19
3.4. Ջրատար համակարգի բարելավում	20
3.5. Գոտիավորման աշխատանքներ	21
3.6. Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայություն	25
3.7 1-85 թեժ գիծ	26
4. Լրատվական ծառայություն	27
5. Որակի, առողջության և անվտանգության բաժին	30
5.1. Փաստաթղթերի մշակում	31
5.2. COVID-19 համավարակի կանխարգելման միջոցառումներ	31
5.3. Դասընթացներ/սեմինարներ	31
5.4 Ռիսկերի հայտնաբերում/Մեղմացող միջոցառումների կիրառում	33
5.5. Համագործակցություն հի օին-ի մարզպետարանների հետ	33
6. Համակազմային ցանց և սերվերային համակարգ	34
6.1. Համակարգային ցանց	35
6.2. Ինտերակտիվ համակարգ	36

ՀԱՀԱԳՈՐԾՄԱՆ
ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԻ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Մարզ Արարատ

● **Արևշատ համայնք.** Սպանդարյան փողոցում գտնվող D=50մմ L=210գծ/մ երկարությամբ պողպատե քայքայված ջրագիծը «Արարատ» հենակետի աշխատակիցների կողմից փոխարինվել է D=63մմ պոլիէթիլենային խողովակներով:



Ապրիլ ամսվա ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում կատարված աշխատանքները հակիրճ նկարագրվում են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Աշխատանքների հակիրճ նկարագիր

Կատարված աշխատանքները	Չափման միավոր	Քանակ
Չափում հոսքաչափով	տեղ	5507
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	31200
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	32010
Հոսակորուստի որոնում կորեյատորով	մ	16150
Ջրաչափական հանգույններ ուսումնասիրություն, սխեմաների կազմում	հատ	10
Շահագործումից հանված ջրագիծ	մ	4579.9
Կառուցված ջրագիծ	մ	4176.6
Կառուցված կոյուղագիծ	մ	293
Վերացված գաղտնի վթարներ	հատ	61
Փոխարինված փական	հատ	33
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց	հատ	561
Մաքրված դիտահոր	հատ	887
Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	52.4
Վերացված վթարներ	Չափման միավոր	Քանակ
Ջրամատակարարման ցանցում	հատ	1481
Ջրահեռացման ցանցում	հատ	3101
Պումպակայաններում	հատ	0
Մաքրված անձրևընդունիչ	հատ	668

Ապրիլ ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Վերացված վթարների քանակային նկարագիր

	Պոլիէթիլենային խողովակներ (հատ)	Մետաղական խողովակներ (հատ)	Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ
Ընդամենը	728	1188	440

1.2. ՋՐԱՉԱՓԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է ապրիլ ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափերի ջրաչափերի քանակը:

Աղյուսակ 3. Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր

Կատարված աշխատանքներ	Ջրաչափի տրամագիծ, մմ									
	15	20	25	32	40	50	65	80	100	Ընդամենը
Տեղադրված	357	3	1	2	0	1	0	0	0	364
Փոխարինված	260	14	4	1	7	5	2	2	1	296
Տեղափոխված	48	17	2	0	1	0	0	1	0	69
Տեխ. ակտ	2	0	0	0	0	0	0	0	0	2
Ընդամենը	667	34	7	3	8	6	2	3	1	731

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել 15-100 մմ տրամաչափի 731 ջրաչափ: Կատարված աշխատանքների 91 %-ը վերաբերել է 15 մմ ջրաչափերին:

1.3. ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ապրիլ ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում տեղ	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում զժ/մ
1	Արաբկիր	2665	339	4
2	Մաշտոց	1630	325	30
3	Շահումյան	2110	237	55
4	Զեյթուն	830	285	0
5	Շիրակ	1760	614	44
6	Արթիկ	0	89	6
7	Ապարան	0	34	6
8	Ալավերդի	2330	18	0
9	Աշոցք	0	10	8
10	Բերդ	0	9	0
11	Իջևան	1505	58	0
12	Լոռի	2580	271	0
13	Նոյեմբերյան	0	17	0
14	Սպիտակ	0	25	0
15	Ստեփանավան	0	17	0
16	Թալին	0	13	0
17	Տաշիր	420	13	0
18	Էջմիածին	0	213	6
19	Չարենցավան	1800	123	0
20	Աբովյան	3140	93	36
21	Հրազդան	1060	166	12
22	Աշտարակ	3450	339	0
23	Կենտրոն	975	285	12
24	Հյուսիս	80	242	21
25	Հարավ	0	355	0
26	Էրեբունի	80	191	0
27	Արմավիր	0	102	0
28	Արտաշատ	0	98	0
29	Արարատ	0	70	0
30	Մասիս	0	34	0
31	Գավառ	580	17	0
32	Սևան	100	117	0
33	Մարտունի	0	25	0
34	Վարդենիս	500	13	0
35	Ճամբարակ	0	16	0
36	Դիլիջան	90	45	22
37	Վայք	0	15	0
38	Եղեգնաձոր	210	12	0
39	Ջերմուկ	0	29	0
40	Միսիան	260	69	10
41	Գորիս	150	42	0
42	Կապան	710	0	0
43	Մեղրի	0	24	0
	Ընդամենը	29015	5109	272

1.4. ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ՀԵՌԱՑՈՒՄ

Ընթացիկ ամսում «Կեղտաջրերի մաքրման կայանների և էլ. սպասարկման» բաժնի ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարավերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել են հետևյալ աշխատանքները.

- Դիլիջանի կեղտաջրերի մաքրման կայանում շարքից դուրս էր եկել օդամուղի առանցքակալը, որի պատճառով մեկ հոսքագիծը չէր աշխատում: Արդյունքում այն փոխարինվեց և այժմ օդամուղը աշխատում է անխափան: Կատարվեց նաև մանր ճաղավանդակի քերիչ սանրերի կարգաբերում, վերանորոգվեց մուտքի դարպասը:

- Վարդենիսի կեղտաջրերի մաքրման կայանում գտնվող պոմպակայանի պոմպը աշխատում էր մեծ աղմուկով և ջուր գրեթե չէր մղում: Արդյունքում պոմպը դուրս բերվեց հորից և մաքրվեց բանվորական անիվը: Այժմ պոմպակայանը աշխատում է անխափան:

- Սևան N5 կեղտաջրերի պոմպակայանում պոմպը կրկին խցանվել էր և ջուր չէր մղում: Արդյունքում պոմպը դուրս բերվեց հորից և մաքրվեցին բանվորական անիվը և հակադարձ փականը:

- Երևանի կեղտաջրերի մաքրման կայանում կատարվեցին ճաղավանդակների վերանորոգման և սպասարկման ախտատանքներ քսայուղվեցին ատամնանիփները և շղթաները, կարգաբերվեցին քերիչ սանրերը, փոխարինվեցին ճաղավանդակների բարձրացման համար նախատեսված քայքայված ճոպանները, կարգաբերվեց էլեկտրական ճախարակը և այլն: Կատարվեցին նաև տարածքի բարեկարգման և ոռոգման համակարգի վերականգնում աշխատանքներ:

Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե էլեկտրական, թե մեխանիկական), կատարվել են կարգավորումներ:



Աղյուսակ 5. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Գտնվելու վայրը	Գառույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը մ ³	Մաքրված կեղտաջրերի ծավալը մ ³	Կեղտաջրից առանձնացած կեղտ տ
1	ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	0	64,139	10.8
2	ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	0	58,074	18
3	ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	0	179,441	5.4
4	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	0	145,381	21.6
5	ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	0	126,232	19.8
6	ք. Սևան	«Սևանի» N3 պ/կ	64,139	0	0
7	ք. Սևան	«Սևանի» N5 պ/կ	58,074	0	0
8	ք. Գավառ	«Գավառ» պ/կ	179,441	0	0
9	ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	145,381	0	0
10	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	126,232	0	0

1.5. ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳ

Հաշվետու ժամանակահատվածում տարածաշրջանային տնօրինությունների սպասարկման տարածքներում պոմպակայանների վրա իրականացված աշխատանքների ամփոփ տեղեկատվությունը ներկայացվում է Աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6. Պ/կ աշխատանքների ամփոփ նկարագիր

Աշխատանքների նկարագիրը	Քանակ
Պոմպի աշխատանքի գնում և կարգավորում	86
Էլեկտրական սարքերի գնում և կարգավորում	28
Այցեր	2
Պոմպի տեղադրում	4
Պոմպի ապամոնտաժում	4

1.6. ՄԵՔԵՆԱ-ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Ապրիլ ամսվա ընթացքում իրականացվել են մեքենամեխանիզմների վերանորոգման լայնածավալ աշխատանքներ, որոնց արդյունքում դրանք կարգաբերվել են և պատրաստ են հետագա շահագործման համար:

«Հարավ» ՇՏ կողմից շահագործվող մեքենամեխանիզմների պատշաճ շահագործման համար ապրիլ ամսվա ընթացքում նորոգվել են թվով 3 մեքենայի շարժիչները մասնակի և ընդհանուր, փոխարինվել են հանդարտիչներ:

Թվով 5 մեքենայի արգելակման համակարգերը նորոգվել են, փոխարինվել են արգելակման սալիկները, խողովակները, վակուումները, սկավառակները և ձեռքի ճոպանները:

Ընթացքային մասերի նորոգում է իրականացվել թվով 9 մեքենա-մեխանիզմի վրա, փոխարինվել են գնդավորներ, հողակապեր, էլաստիկ մուֆտեր, հեղուսներ, մանեկներ, դեկի ձգաձողեր, ուղղորդիչ վռաններ, մեղմիչներ, անվակունդի առանցքակալներ, հարվածամեղմիչի զսպանակներ և հարվածամեղմիչներ, կարդանի խաչուկներ, ատամնանիփներ, առանցքակալներ, կիսաառնիներ, խտաբուկեր, մանեկներ, սաստեղիտներ:

Թվով 25 անվադող նորոգվել է, փոխարինվել և հավասարակշռվել է:

Թվով 5 մեքենայի մարտկոցները փոխարինվել են նորերով:

Փոխարինվել են թվով 74 մեքենա-մեխանիզմի շարժիչի, փոխանցման տուփի, հիդրոհամակարգի յուղեր, արգելակման հեղուկ և քսայուղեր:

Թվով 11 մեքենայի վրա, փոխարինվել են կցորդման սկավառակներ, շաղկապման մեխանիզմներ, անջատող առանցքակալներ և խտաբուկեր:

Թվով 16 մեքենա-մեխանիզմի համար նորոգվել և փոխարինվել են բարձր ճնշման ռետինե խողովակներ:

Վերանորոգվել են թվով 7 մեքենայի հոսանքի մալուխները, կայծամուներ, կայծամումի լարեր, ռելեներ, վառոցքի բանալիներ:

Եռակցման աշխատանքներ է իրականացվել թվով 5 մեքենա-մեխանիզմի վրա:

Հովացման համակարգի նորոգում է իրականացվել թվով 5 մեքենայի վրա, փոխարինվել են հովացման ռադիատորները,

հովացման ռադիատորների կափարիչները, խողովակները, փոկերը և ջրի պոմպերը:

Թվով 2 մեքենայի մեկնարկիչները նորոգվել են, փոխարինվել են ածուխները, վռանները, փաթույթները և բենդեքսները:


Թվով 2 մեքենայի վառելիքի համակարգերը նորոգվել են, փոխարինվել են բարձր ճնշման մղիչներ, բոցամուղեր, կայծամուներ:

Նորոգվել է թվով 2 մեքենայի փոխանցման տուփերը, փոխարինվել են ատամնանիփները, առանցքակալները, խտաբուկները և ներդիրները:

Թվով 5 մեքենայի վրա իրականացվել են գեներատորի նորոգում, փոխարինվել են ածուխներ, դիողային կամրջակներ, առանցքակալներ և տուլկիներ:

Մուուցման նորոգում է իրականացվել թվով 4 մեքենայի վրա, փոխարինվել են ժիզյորներ, ներդիրներ, ասեղներ, բարձր ճնշման շտուցերներ, լիցքավորման հետադարձ փականներ:

Վերոնշյալ աշխատանքների արդյունքում իմասականում մեքենամեխանիզմներն աշխատում են անխափան, որը նպաստում է ժամանակին վերացնել համակարգում առկա ջրամատակարարման և ջրահեռացման վթարները:



ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: 01.05.2021թ. դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել 540,098 պայմանագիր. Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	2021թ. մարտ ամսին ծառայություններ ստացած բաժանորդների թիվ	Կնքված պայմանագրերի քանակը	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	655,423	517,029	78,9
	Իրավաբանական անձ	29,189	23,069	79,0

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բաժանորդների ընդհանուր քանակ	Ծախսող բաժանորդների քանակ	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	726,209	563,622	77,6
	Իրավաբանական անձ	34,641	24,381	70,4

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով, հնարավորության դեպքում, լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի համապատասխան աշխատակիցների կողմից: Միաժամանակ համեմատական վերլուծություններ են կատարվում այլ ծառայություններ մատուցող ընկերությունների տվյալների հետ (Հայաստանի էլեկտրական ցանցեր և այլն):

Առևտրային տեղամասերի սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել և տվյալների բազա է մուտքագրվել թվով 871 նոր բաժանորդ:

2.2. ՀԱՍՈՒՅԹ


Շարունակվում է ջրաչափերի փոխարինման գործընթացը: Պիլոտային ծրագրերին (Շիրակ, Լոռի, Սևան և այլն) զուգահեռ փոխարինվում են նաև այլ տարածքներում շարքից դուրս եկած ջրաչափերը: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր՝ բարձրակազ և ավելի զգայուն ջրաչափերով: Խոշոր սպառում ունեցող իրավաբանական բաժանորդների ջրաչափերը հնարավորության դեպքում միացվում են Լոկատոր համակարգին ծախսերը պարբերաբար, առանց այցելության, առցանց հսկելու նպատակով:

Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը նվազեցնում կամ գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը: Գրեթե ամբողջովին փոխարինվել և բաժանորդների տարածքներից դուրս են տեղափոխվել գործող բուժ. հաստատությունների, զին. մասերի, դպրոցների և մանկապարտեզների ջրաչափերը:

Փոխարինված ջրաչափերն ուղարկվում են պարտադիր լաբորատոր ստուգաչափման: Ապրիլ ամսվա ընթացքում ստուգաչափվել է 3083 ջրաչափ:

Տնօրինություն	Սպառողներ	Մարքին	Անսարք	Միջամտած	Ստուգաչափված ջրաչափերի քանակ առ 05.2021
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	1081	1518	260	2859
	Իրավաբանական անձ	81	119	24	224
	Ընդամենը	1162	1637	284	3083

Ստուգաչափված ջրաչափ




Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասն ունի խնդիրներ: Օրինակ՝ ապրիլ ամսին փոխարինված 3083 ջրաչափերի մոտ 62%-ը (կամ 1921 ջրաչափ) անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն:

Միջամտած ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:

Ընթացիկ ամսում լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկվել է 226,021 մ³ հասույթ:

Ստորև, գրաֆիկային տեսքով, բերված են 2021թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ.

Հասույթ



2.3 ԳԱՆՁՈՒՄ

Գանձման բարձր ցուցանիշ ապահովելու համար անհրաժեշտ է ունենալ ճիշտ ձևավորված հասույթ: Ապրիլ ամսին գանձումը կազմել է 1,648 մլն դրամ (93 %):

Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումները սահմանված ժամկետում ապահովելու նպատակով ընկերությունում մինչև 2020թ. ապրիլ ամիսը, կիրառվում էին բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր փոստային առաքում, ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն: Մակայն, հաշվի առնելով աշխարհում՝ այդ

թվում Հայաստանում կորոնավիրուսով պայմանավորված իրավիճակը, ինչպես նաև ռազմական դրությունը, ընկերությունը ապրիլ ամսին զերծ է փասցել հիշեցումների և ծանուցումների մինչ այժմ կրավող մեթոդներից (բացառությամբ՝ SMS-հաղորդագրությունների):

Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով՝ հնարավորության դեպքում իրականացվում էին պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը, սակայն, վերը նշված հանգամանքներից ելնելով, հաշվետու ամսվա ընթացքում մեր կողմից չեն իրականացվել նաև պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ:

Այս իրավիճակը, բնականաբար, իր բացասական ազդեցությունն է ունեցել գանձման բարձր, նախատեսված ցուցանիշների ապահովման գործում:

2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ / ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ/

Համեմատաբար մեծ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով Առևտրային տնօրինության աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը: Ապրիլ ամսվա ընթացքում Առևտրային տնօրինության կողմից կնքվել է թվով 169 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 22,5 մլն դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում է դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն:

Ստորև աղյուսակով ներկայացվում է դեբիտորական պարտքերի և հայտնաբերված խախտումների վերաբերյալ արձանագրություններով դատարան ներկայացված գործերը:

Դատարան ներկայացված գործերի քանակը շարունակական		Բավարարված		Մերժված		2017-2021թ.թ. ընթացիկ գործեր		ԴԱՀԿ ներկայացված գործեր	
քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար
10383	1371209062	6997	713262201	156	20879511	3457	596569759	4032	349251400


Ինչպես ցույց է տալիս աղյուսակը՝ դատարան ներկայացրած գործերի ընդհանուր քանակի 67 %-ն արդեն բավարարված է և ընդամենը 2 %-ը մերժված:

Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տնօրինություն	Պարտքը 01.05.2021թ. դրությամբ (մլն. ՀՀ դրամ)	Այդ թվում մարտ ամսվա հատույթ (մլն. ՀՀ դրամ)
Առևտրային, այդ թվում	7,774	1,877
Բնակիչ-բաժանորդներ	5,845	1,291
Իրավաբանական անձեր	1,929	586

Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների՝ նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

ԵՏՍՏ սպասարկման տարածքում շուրջ 253.8 մլն ՀՀ դրամը կուտակվել է երկու բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով պարբերաբար չվճարելու պատճառով. Դրանք են «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը և «ՀՀ Արարատի մարզի Ազատաշեն» համայնքը:



2.5 ՋՐԱԶԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.05.2021թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Բրավարանական		
		Ընդամենը	Այդ թվում՝ ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում՝ ծախսող	%
Առևտրային	Ջրաչափով	691,930	561,906	81.21	33,506	24,373	72.74
	Առանց ջրաչափի	34,279	1,716	5.01	1,135	8	0.70

Տվյալների բազայում 01.05.2021թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տնօրինություն	Բնակիչ-բաժանորդներ			Բրավարանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում՝ ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում՝ ժամկետանց	%
Առևտրային	863,955	385,439	44.61	37,411	10,174	27.20

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:

Հաշվետու ամսվա ընթացքում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում՝ թաղամասային ծրագրով) շուրջ 4173 ջրաչափական սարք: Այդ թվում՝ նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 970 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:

Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճշգրիտ հաշվառմանը:

ՊԿԱԾ տեղադրված ջրաչափեր

Հասցե	Ջրաչափերի ընդհանուր քանակ	Տեղադրված ջրաչափերի քանակ	%
գ.Քասախ	2333	1905	81.6
գ.Պռոշյան	1570	1041	66.1
ք.Հրազդան, միկրոշրջան թաղ.	5873	1825	32.0

«Լոռի» տեղամասում ընկերության վարչական և տեխնիկական տնօրինությունների հետ համատեղ իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիր: Չնայած երկրում տիրող համաճարագային իրավիճակին, ջրաչափերի փոխարինման աշխատանքներ են իրականացվել Լոռի, Շիրակ, Գորիս, Կապան, Սիսիան, Արարատ և Արտաշատ տեղամասերի սպասարկման տարածքներում: Առկա անսարք և փոխարինման ենթակա ջրաչափերից արդեն փոխարինվել է Լոռի տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում՝ 8,642, Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում՝ 7,501, Գորիս տեղամասի սպասարկման տարածքում՝ 1093, Կապան տեղամասի սպասարկման տարածքում՝ 1,787, Սիսիան տեղամասի սպասարկման տարածքում՝ 1038, Արարատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 1,360 և Արտաշատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 3,328 ջրաչափական սարք:

2.6 ԱՊՕՐԻՆԻ ՄԻԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՑՈՒՄ

Շարունակվում են ապօրինի միացուժների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Ապօրինությունների հայտնաբերման արդյունքում կազմված արձանագրությունները «Բնտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, հասցեները փոխանցվում են տարածաշրջանի տնօրինությանը ջրագրվում իրականացնելու նպատակով: Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացուժների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա հաշվարկված ջրածախսերի և դրա դիմաց կատարված վճարումների տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում: Ապօրինությունների հայտնաբերման և արձանագրությունների կազմման գործառույթը, տեղամասերի առևտրային ծառայության աշխատակիցներից բացի, հիմնականում իրականացվում է Գլխավոր տնօրինության առևտրային վերահսկողության աշխատակիցների կողմից: Հայտնաբերված և արձանագրված խախտումների քանակի նվազումը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ պայմանավորված է նաև երկրում տիրող, վերը նշված իրավիճակների հետ:

Տնօրինություն	Քանակ	Խ.մ.	Գումար (ՀՀ դրամ)
Առևտրային	360	226,600	35,857,297

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ




3.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված է Երևան քաղաքի ապրիլ ամսվա (15-ի դրությամբ) շարունակականության տվյալը, որը կազմել է՝ 96.6%, ինչը նույնն է՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշի համեմատ:




Շարունակում է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:

Ջրամատակարարման շարունակականություն Երևան




● Հաշվետու ամսվա ընթացքում շարունակականության և մոնիթորինգի բաժնի կողմից ՇՏ-ներում կարգաբերվել են թվով 37 ՃԿՓ-ներ:

Ստորև ներկայացված է կարգաբերված ՃԿՓ-ների գրաֆիկներից մի քանիսը.




Երևան քաղաքը սնող Գառնի, Ապարան, Արզնի 1, Արզական, Գյումուշ 1, 2 և Կաթնաղբյուրի ջրատարների ինքնահոս ջրաքանակը 2021թ-ի ապրիլ ամսին, 2020 թ-ի նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 149 լվ-ով, իսկ Երևան քաղաքի ջրարտադրության համար հոսանքի ծախսը ավելացել է 290 հազար կՎտ-ով, ինչը երևում է ստորև ներկայացված գրաֆիկում.



3.2. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում էլ. էներգիայի ծախսը Երևան քաղաքում ավելացել է 10 413 ԿՎտ/ժ. (2,29%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Երևան քաղաքի բակային պոմպեր ԱՌԱՆՅ ԽԱՐԲԵՐԴԻ ՊՈՄՊԱԿԱՅԱՆԻ*




Մեծ ուշադրություն է հատկացվել նոր տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների ծախսերին՝ ոչ միայն խախտումների կանխման, այլև ծախսի ժամային գրաֆիկների վերլուծության միջոցով յուրաքանչյուր պոմպի շահագործման խնդիրների հայտնաբերման նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել են 264 հասցեներ: Ուսումնասիրության արդյունքում 2 հասցեներում հայտնաբերվել են ապօրինի լարանցումներ, որի համար կազմված արձանագրության հիման վրա վերականգնվել է Ընկերությանը պատճառված 4287 կՎտ/ժ-ին համարժեք 191417 դրամի կորուստը, 1 հասցեում հայտնաբերվել հավելագրում՝ 1700 կՎտ.ժ, որը ճշգրտվել է «ՀԷՑ» ՓԲԸ հետ, 1 հասցեում վերականգնվել է նախկինում կատարված խախտումների հետևանքով պատճառված փաստի փաստագրողային մասը՝ 5020 կՎտ/ժ: Ապրիլ ամսին կասկածելի 2 հասցեներում էլ. հաշվիչների փաստացի ցուցմունքների վերաբերյալ կազմված արձանագրությունների արդյունքում կանխվել է հավելագրման հնարավորությունը և վերականգնվել նախորդ ամիս հավելագրված 3804 կՎտ.ժ էլ. էներգիան:

Թվով 4 նոր հոսքաչափերի էլ. սնուցման ապահովման նպատակով՝ ձեռք են բերվել էլեկտրաէներգիայի մատակարարման տեխնիկական պայմաններ:


● Էջմիածին քաղաքում տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների և իրականացրած վերահսկողության արդյունքում էլ. էներգիայի ծախսը նվազել է 1369.41 ԿՎտ/ժ կամ 6.7%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Էջմիածին



● Շիրակ քաղաքում էլ. էներգիայի ծախսը ավելացել է 4270 ԿՎտ/ժ կամ 13,6 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Շիրակ



Կատարված աշխատանքներ

● Թվով 37 խոշոր պոմպակայաններում կատարվել են ուսումնասիրություններ, որի արդյունքում թվով 25 պոմպակայաններում վերացվել են հայտնաբերված թերությունները:

● Չորս հասցեներում նախկին վթարված պոմպերը փոխարինվել են նոր ձեռք բերված վարիատորային պոմպերով:

Ինվերտորների տեղադրում


● Ինը հասցեներում նախկին պոմպերի ավտոմատ կառավարման պնևմատիկ համակարգերը փոխարինվել են ինվերտորային համակարգով:

Խոշոր պոմպակայանների էլ. էներգիայի խափանումներ

● Հաշվետու ժամանակահատվածում 35 խոշոր պոմպակայաններում էլ.մատակարարման խափանումներն օպերատիվ կերպով շտկվել են, իսկ առաջացած թերությունները՝ հայտնաբերվել և վերացվել:

● Ապրիլ ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլեկտրաէներգիայի ծախսն ավելացել է 255 365 կՎտ/ժամ կամ 29,50% (անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ):

Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա




● Մարզերի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսը նվազել է 43,546 կՎտ.ժ/ամիս կամ 2,31 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ.

Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա



● Ընդհանուր էլեկտրաէներգիայի ծախսն ավելացել է 214,256 կՎտ.ժ կամ 5,73 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ.

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլ. էներգիա



3.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ստորև աղյուսակում ներկայացվում են ապրիլ ամսվա ընթացքում աշխարհագրական տեղեկատվական համակարգում կատարված աշխատանքները.

Աշխատանքի անվանում	Չ/Մ	Քանակ
Շահագործումից հանված ջրագիծ	մետր	454
Կառուցված ջրագիծ	մետր	1085
Տեղադրված և փոխարինված փականներ	հատ	59
Կառուցված կոյուղագիծ	մետր	124
Տեխնիկական պայմանների թվայնացում	հատ	131
Երևան քաղաքի Հաղթանակ և Բագրևանդ թաղամասերի կոյուղագծերի թվայնացում	թաղամաս	2
Smart monitoring հավելվածից ստացված 11 կոյուղու վթարների թվայնացում	վթարներ	11
Երևան քաղաքի կոյուղագծերի քարտեզագրում	մետր	130
Երևան քաղաքում տեղադրված պոպակայանների տեղադիրքերի ճշտումներ և թարմացումներ	քաղաք	1
Ջեյթուն տեղամասի ներքին ջրային ցանցի թարմացումներ	տեղամաս	1
Բալախովիտ, Ազատաշեն, Արամուս, Հաղթանակ գյուղերի ջրագծերի թարմացումներ ԱՏՀ-ում	գյուղեր	4
Դավիթաշեն համայնքի ներքին ջրային ցանցի թարմացումներ	համայնք	1
2020 թ. նոյեմբերին և դեկտեմբերին, 2021 թ. հունվարին Երևան քաղաքում իրականացված վթարավերականգնողական աշխատանքների թվայնացում	Քաղաք	1

<i>Աշխատանքի անվանում</i>	<i>Չ/Մ</i>	<i>Քանակ</i>
Արմավիրի մարզի Ակնալիձ, Արզինա և Շենիկ համայնքների վերաբերյալ տվյալների բազայի ստեղծում ԱՏՀ-ում	համայնք	4
Արագածոտն մարզի Շամիրամ, Դպրեվանք գյուղերի տվյալների բազայի ստեղծում ԱՏՀ-ում	գյուղ	2
Արագածոտնի մարզի Օշական գյուղի տեղեկատվության թարմացումներ ԱՏՀ-ում	գյուղ	1
Չարենցավան քաղաքի թեմատիկ շերտերի թվայնացում և տվյալների բազայի լրացում	գաղաք	1
Տաշիր քաղաքի թեմատիկ շերտերի թվայնացում և տվյալների բազայի լրացում	գաղաք	1
Այրում համայնքի հատակագծի մասշտաբավորում և տեղափոխում AutoCad ձևաչափից GIS համակարգ	համայնք	1
Smart Monitoring խմբի աշխատանքների տվյալների թվայնացում և բազավորում	խումբ	1
Երևան քաղաքի շենքերի և փողոցների տվյալների բազայի թարմացումներ և ուղղումներ ԱՏՀ-ում	քաղաք	1
«Բնտերակտիվ» համակարգում իրավաբանական բաժանորդների տեղադիրքի ճշտում	բաժանորդ	42
«Բնտերակտիվ» համակարգում ֆիզիկական բաժանորդների տեղադիրքի ճշտում	բաժանորդ	56
Բազայում նոր ֆիզիկական կետերի ավելացում	կետեր	58
Բազայում նոր իրավաբանական կետերի ավելացում	կետեր	19
Գյումրի և Վանաձոր քաղաքների հիդրավիկ մոդելների կառուցում և բացակա տեղեկատվության հավաքագրում	քաղաք	2
Հիդրավիկ մոդելների ստեղծում համայնքների համար	համայնք	22

3.4. ՋՐԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Ստորև ներկայացնում ենք հաշվետու ամսվա ընթացքում հայտնաբերված վթարների և կատարված աշխատանքների համառոտ բնութագիրը.

«Էջմիածին» տեղամաս

Տեղամասի ջրաքանակների չափումների ժամանակ հայտնաբերվել են Q=5լ/վ ջրաքանակի արտահոսքով վթարներ Այգեկի ջրատարի վրա, որոնք վերացվել են տեղամասի ուժերով:



«Չարենցավան» տեղամաս

Տեղամասում ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել են վթարներ Մաքրավան-Աբովյան ջրատարից Բջնի գյուղի միացման վրա 2լ/վ, ինչպես նաև Կարենիս, Քարաշամբ, Ջորավան գյուղերի միացման վրա 5լ/վ: Դրանք վերացվել են Չարենցավան ՇՏ-ի կողմից:



«Նորաբաց» պ/կ

Նորաբաց պ/կ-ի տարածքում առաջացել էին խնդիրներ՝ կապված այնտեղ գտնվող փականների հետ: Փոխարինվել է D=800մմ փականի միջադիրքը և տեղադրվել է նոր D=300մմ փական: Արդյունքում վերացվել է հոսակորուստը և կառավարելի է դարձել պ/կ-ի աշխատանքը: Աշխատանքներն իրականացվել են «Մասիս» ՇՏ-ի ուժերով:



«Գառնի» պ/կ

Գառնի պ/կ-ում պոմպերի աշխատանքի կանգի ընթացքում կապտաժներից ջուրը ոչ բավարար արտահոսքի պատճառով փաստում էր կապտաժները: Տեղադրվել է նոր D=200մմ ջրթափ, իսկ գոյություն ունեցող մյուս ջրթափների վրա տեղադրվել են D=200մմ երկու հատ անկյունակ ջուրն ուղղորդելու համար: Այս աշխատանքներն իրականացվել են Ք և ԽՋՄԿ ծառայության աշխատակիցների կողմից:



«Արզնի 1» ջրատար

Ջրատարի վրա քարաթափման հետևանքով առաջացել էր վթար՝ 450լ/վ արտահոսքով: Օպերատիվ արձագանքման և աշխատանքների արագ կազմակերպման շնորհիվ D=900մմ թուջե ջրատարից 4մ հատված փոխարինվել է D=900մմ երկաթ խողովակով: Աշխատանքները կատարվել են «Արևմուտք» ՇՏ-ի ուժերով:



Հավելում ենք, որ իրականացվել են նաև ջրաքանակների չափման և կարգավորման ընթացիկ աշխատանքներ:

3.5 ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Քաղաք Գյումրի

● Շիրակ ՇՏ և Գոտիավորման վարչության աշխատակիցների կողմից ուսումնասիրություն է կատարվել Գյումրի քաղաքի Տեր-Գաբրիելյան փողոցում հայտնաբերված անհայտ ջրագծի վրա, որը միացված էր Վարդ-Բաղ ջրատարից: Քանի որ Բանավան կոչվող թաղամասում ամբողջությամբ ցանցը փոխված է, ուստի այն միացման կետում խցափակվել է: Արդյունքում շահագործումից հանվել են D=80մմ, L=350մ և D=40մմ, L=70մ պողպատե ջրագծերը: Տնտեսվել է Q=1,5-2 լ/վ ջրաքանակ:



● Շիրակ տեղամասի և Գոտիավորման վարչության աշխատակիցների կողմից ուսումնասիրվել է Գյումրի քաղաքի Անի թաղամաս, 7-րդ փող. 6 շենքի հարակից ջրագիծը: Հարակից տարածքում շին. աշխատանքներ կատարելու համար այն շրջանցվել է կառուցելով նոր ՊԷ ջրագիծ: Արդյունքում շահագործումից հանվել է D=200մմ, L=20մ պողպատե ջրագիծ, կառուցվել D=63մմ, L=19մ և D=32մմ, L=12մ ՊԷ նոր ջրագիծ:



Գյուղ Ոսկեհասկ

● Շիրակ տեղամասի և Գոտիավորման վարչության աշխատակիցների կողմից ուսումնասիրվել է Ոսկեհասկ գյուղում վթարված հին D=100մմ պողպատե ջրագիծը, որը նախկինում սնուցել է հին, չգործող դպրոցը և հարակից մի քանի տներ: Քանի որ ջրագիծը չի սպասարկում ոչ մի բաժանորդի, որոշվել է այն խցափակել: Արդյունքում շահագործումից հանվել է D=100մմ, L=300մ պողպատե ջրագիծ: Տնտեսվել է Q = 2 լ/վ ջրաքանակ:



Քաղաք Վանաձոր

● Վանաձոր քաղաքի Վարդանանց 12 շենքի ջրագիծը վթարներից խուսափելու համար անհրաժեշտ եղավ փոխարինել: Շահագործումից հանվել է D= 40մմ, L=40գծմ ջրագիծ և կառուցվել նոր D= 25մմ, L=8գծմ պոլիէթիլենային ջրագիծ:




Քաղաք Ստեփանավան

● Ստեփանավան քաղաքի Ամերիկական 12 շենքի ջրագիծը, կառուցված լինելով ԽՍՀՄ տարիներին անհրաժեշտ եղավ փոխարինել պարբերաբար կրկնվող վթարներից խուսափելու համար: Փոխարինվել է D=50մմ, L=11մ խողովակ և արդյունքում տնտեսվել է Q = 0,5լ/վ ջրաքանակ:



Քաղաք Հրազդան

● Հրազդան քաղաքում կատարված ուսումնասիրությունների արդյունքում Աթաբեկյան թաղամասում հայտնաբերվել է Միկրո ՕԿՁ-ի D=400 մմ ելքից միացված ապօրինի ոռոգման ցանց D = 80մմ տրամագծով, որը խցափակելուց հետո տնտեսվել է Q = 2,5լ/վ քանակությամբ ջուր:



● «Հրազդան միկրո» ՕԿՁ-ի մոտակայքում կատարված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել են 2 ապօրինի միացումներ, որոնք խցափակվել են Հրազդան ՇՏ աշխատակիցների կողմից:



● Շինարարների և Բաֆֆու փողոցներում ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել են 3 վթարներ, որոնք վերացնելուց հետո տնտեսվել է ընդհանուր $Q = 8$ լ/վ ջրաքանակ:



Քաղաք Սևան

● «Սևան» ՇՏ աշխատակիցների հետ կատարված ուսումնասիրությունների արդյունքում Գումաձոր թաղամասում շահագործումից հանվել են $L=2000$ մ, $D=50$ և 40 մմ տրամագծերի խողովակներ: Արդյունքում տնտեսվել է $Q=1,5$ լ/վ ջրաքանակ, ինչպես նաև խցափակվել են 4 ապօրինի միացումներ:

● Բաբաջանյան փողոցում իրականացված աշխատանքների արդյունքում Բաբաջանյան 1 շենքի մուտքագծից դեպի դեղատուն գնացող միացման վրա հայտնաբերվել է $2,5$ լ/վ քանակությամբ վթար, որը լցվում էր կույուղու դիտահորի մեջ: Վթարը վերացնելուց հետո Սևան քաղաքի «Միկրո» գոտու ջրաքանակը նվազել է $Q=1,5$ լ/վ-ով:



Քաղաք Դիլիջան

● Դիլիջան քաղաքում Կալինինի փողոցում կատարված ուսումնասիրությունների արդյունքում 150 մմ թուջե խողովակի վրա հայտնաբերվել է վթար, որը վերացնելուց հետո տնտեսվել է $Q = 2$ լ/վ ջրաքանակ:



Քաղաք Ծաղկաձոր

● Քաղաք Ծաղկաձորում կատարած վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է վթար, որի գտնվելու վայրը ստույգ տեղորոշվել է տեսախցիկի օգնությամբ: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է $Q=0.5$ լ/վ ջրաքանակ:



● **Գազարին-Ջրատատ** D=400մ տրամագծով ջրատարի վրա կատարված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է վթար, որը վերացնելուց հետո տնտեսվել է $Q=3$ լ/վ ջրաքանակ:



● **Գազարինական գյուղը** անուցող ջրագծի վրա՝ Սևանի ՃՈ հետնամասում, կատարված աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է փասված օդահեռ փական, որից արտահոսող ջրի քանակը կազմում էր $Q=7$ լ/վ:




Քաղաք Աբովյան

● Գոտիավորման վարչության աշխատակիցների կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար 3-րդ միկրոշրջանի 6-րդ և 7-րդ շենքերի դիմաց: Կատարվել է D=80մ պողպատե խողովակի փոխարինում D=63 մմ ՊԷ խողովակով L=70մ, ինչպես նաև D=200մ պողպատե ջրագծի շահագործումից հանում L=100մ: Արդյունքում տնտեսվել է $Q=5$ լ/վ ջրաքանակ:




● Գոտիավորման վարչության աշխատակիցների կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է վթար 3-րդ միկրոշրջան 3/444 ավտոտնակի մեջ: Կատարված աշխատանքների արդյունքում տնտեսվել է $Q=17$ լ/վ ջրաքանակ:



● **Քաղաք Երևան,** Նոր Նորքի 1-ին զանգվածում գոտիավորման վարչության աշխատակիցների կատարած ուսումնասիրությունների արդյունքում Նանսենի 6-րդ շենքի մոտ հայտնաբերվել է գաղտնի վթար: Փոխարինվել է D=80մմ պողպատե խողովակը D=90մմ ՊԷ խողովակով L= 80մ: Վթարը վերացնելու արդյունքում տնտեսվել է Q=5,5լ/վ ջրաքանակ:



● **Քաղաք Էջմիածին.** Գոտիավորման վարչության կատարած ուսումնասիրությունների արդյունքում Շահումյան 50 շենքի մոտ ՊԷ ելքի վրա, հայտնաբերվել է գաղտնի վթար: Փոխարինվել է D=75մմ, L=45մ պողպատե խողովակը: Վթարը վերացնելու արդյունքում տնտեսվել է Q= 5լ/վ ջրաքանակ:



3.6 ՔԼՈՐԻ ԵՎ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ընթացիկ ամսում Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայության կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

● Քաղաք Իջևանի Ջրաշեն՝ քլորակայանում պոմպից առաջ իրականացվել է փականի միացում՝ հեղուկ քլորի համակարգի մտնող քլորաջրի պոմպից առաջ անցում և փականի տեղադրում, որը հոսանքի բացակայության դեպքում ապահովելու է քլորասարքերի անխափան աշխատանքը, ինչպես նաև գարնանային և աշնանային վարարումների ժամանակ քլորի համակարգի առանց պոմպի շահագործումը:



● Քաղաք Իջևանի Սառնաղբյուր քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու համար իրականացվել է քլորասարքերի փոխարինում:

● Արզնի քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու համար իրականացվել է դոզատորի վերանորոգում:



● Գետափնյա քլորակայանում հիպոքլորիդի հաբի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու համար իրականացվել է էլ. փականի փոխարինում:



● Քաղաք Արովյանի Ծաղկասար քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքը և ստույգ դոզավորումն ապահովելու համար իրականացվել է դոզատորի փոխարինում:

● Քաղաք Երևանի Ավան, Բաբաջանյան 3/1 հասցեում իրականացվել է հեղուկ քլորի վակուում կարգավորիչի վերանորոգում՝ հետագա շահագործման նպատակով:



● Քաղաք Կապանի «Չանախչի» ՋՄԿ-ում արագ գործողության ֆիլտրերը օրվա ընթացքում ըստ պահանջի հնարավոր չէր վանալ: Լվացումը իրականացվում է պոմպի միջոցով, որի նիշը ընդամենը 10-15 սմ-ով է ցածր ֆիլտրերի վազման ջրամբարի առավելագույն նիշից (W=150 մ/խ տարողությամբ ջրամբարը պետք է ամբողջությամբ կուտակվեր ջրով, որպեսզի կարողանայինք իրականացնել ֆիլտրերի վազում): Արագ գործողության ֆիլտրերի վազման գործընթացը օրվա ընթացքում ըստ պահանջի կատարելու նպատակով ներծծման խողովակաշարի վրա տեղադրվել է d=300 մմ տրամագծի հակադարձ փական:

3.7 1-85 ԹԵԺ ԳԻԾ

● Հաշվետու ամսվա ընթացքում 1-85 հեռախոսակենտրոնում գրանցվել է 43338 զանգ, որից առևտրային բնույթի զանգերը՝ 11868: Երևան քաղաքի համար եղել է 9326 զանգ:

● Ապրիլ ամսվա Երևանի ցուցանիշը կազմել է 78,6%, իսկ մարզերի ցուցանիշը՝ 2542 զանգ (21,4%): Շահագործման վերաբերյալ ստացվել է 31470 զանգ, որից Երևան քաղաքինը՝ 24110 զանգ (76,6%), իսկ մարզերինը՝ 7360 զանգ (23,4%):

185 հեռախոսային կանչերի օրական հաշվառման հաշվեգիր

		Ստորաբաժանում	
Առևտրային	Ընդամենը		11868
	ԵՐԵՎԱՆ		9326
	ՄԱՐԶԵՐ		2542
Շահագործում	ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ		31470
	ԱՐԵՎԵԼՔ		12765
	Շենգավիթ		2599
	Կենտրոն		3946
	Հյուսիս(Ավան, Լոր Կորթ)		1274
	Էրեբունի		2274
	Պոմպ		701
	Սարգեր		1971
	այդ թվում Կոյուղու վթար		70
	այդ թվում Դիտանորի խցանում		2749
	ԱՐԵՎՄՈՒՏՔ		18705
	Արաբկիր		4654
	Քանաքեռ-Զեյթուն		1918
	Մաշտոց		3029
	Շահումյան		2919
	Պոմպ		1367
	Սարգեր		4818
	այդ թվում Կոյուղու վթար		135
	այդ թվում Դիտանորի խցանում		4254
	Ընդամենը		43338

ԼՐԱՏՎԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



Նախորդ ամիսների դրական փորձի հիման վրա, ապրիլին Հանրային կապերի բաժինը /ՀԿԲ/ շարունակել է առավել ուշադիր լինել արտակարգ իրավիճակների նկատմամբ և փորձել կանխարգելել սպառողների հնարավոր դժգոհությունը տեղեկատվության հոսքի ապահովման միջոցով:

Դրա վառ օրինակ է «Արին-Բերդ» օրվա կարգավորիչ ջրամբար – Էրեբունի և Վարդաշեն թաղամասեր ձգվող խոշոր ջրատարի վթարը, որը տեղի ունեցավ վաղ առավոտյան, ջրային կուտակուժներ առաջացրեց ճանապարհին ու տրանսպորտային խցանուժների բերեց:




#ՎեոլիաՀայաստանը գնում է նորանորոշումների ճանապարհով
 «Սիավան» օրվա կարգավորիչ ջրամբարում (ՕԿՁ) ընթանում են կառույցների քաղաքագլուխ աշխատանքները: Այս ՕԿՁ-ն ջրով է ապահովում Արարատի մարզի Արաբեջ, Ուխտաձի, Վանաշեն, Սիավան և Արաբա գյուղերը:
 Համակարգի շատ ՕԿՁ-ներ տանայվներ անապոստիկ հետևանքով մեզ վրեժ են ինչը հանգեցնում է ջրի արտահոսքի: Վեոլիա Ջուր ընկերությունը որոշել է այս անգամ դրանք վերանորոգել նոր տեխնոլոգիայով, այն է՝ ՕԿՁ-ները ներքից պատել 1.5 մմ ... Տեսնել ավելի»



ՀԿԲ-ն արդեն 1 ժամ անց հրապարակեց առաջին հաղորդագրությունը լուսանկարով facebook.com/veolia.armenia էջում այն մասին, որ ՎեոլիաԹիմը անմիջապես արձագանքել է վթարին: Օրվա ընթացքում դրան հետևեց ևս 4 հաղորդագրություն, ընդ որում վերջինը հրապարակվեց ուշ երեկոյան, որով հանրությանը տեղեկացվեց վերանորոգման աշխատանքների ավարտի մասին:

Նման մոտեցում որդեգրվեց նաև «Արզնի-Երևան» մայրուղային ջրատարի վթարի ժամանակ, երբ 2 օրում ապահովվեց 4 հրապարակում facebook.com/veolia.armenia էջում: Իսկ թեմայի լուսաբանուժն ավարտվեց «Արմենիա» հեռուստատեսության ռեպորտաժով՝ Վեոլիա ջուր ընկերության կողմից վթարի վերացման նպատակով տարվող աշխատանքների մասին:



Ընդհանրապես հաշվետու ժամանակաշրջանում շատ էին խոշոր ջրատարների կանգառների դեպքերը, որոնք բացի վթարներից պայմանավորված էին կանխարգելիչ, պլանային շինարարական աշխատանքների կամ ապօրինությունները վերացնելու անհրաժեշտությամբ:

Այս պարագայում ՀԿԲ-ն ձգտել է նախ՝ ջրանջատուժների մասին հանրությանը տեղեկացնել նախօրոք և հետո՝ պարզաբանել աշխատանքների կարևորությունը, ակնկալիքներն ու ՎեոլիաԹիմի ջանքերը՝ սպառողներին պատճառվող անհարմարությունը նվազագույնի հասցնելու գործում:

Դրա օրինակ է «Գառնի-Երևան» մայրուղային ջրատարի կանգառը, խողովակաշարի վթարային հատվածը փոխարինելու համար: Այդ մասին սպառողներին ծանուցվեց նախօրեին, նաև ցույց տրվեց, թե մինչ այդ ինչ նախապատրաստական աշխատանքներ են տարվել Օպերատորի կողմից և ինչպես է ընթացել նոր խողովակաշարի կառուցումը:

Նույնը կարելի էր ասել «Գառնի-Երասխ» մայրուղային ջրատարի կանգառի մասին, որի ընթացքում 3 հատվածներում միաժամանակ մի քանի վթար վերացվեց: Ինչպես նաև «Ապարան-Երևան» մայրուղային ջրատարի շահագործման 24 ժամով դադարեցման վերաբերյալ Երևանի Դավթաշեն վարչական շրջանում, Պռոշյան և Քասախ գյուղերում վերանորոգման աշխատանքներ կատարելու նպատակով:

Բնականաբար, շարունակվել են հրապարակուժները համակարգում ընթացիկ վերանորոգման, շինարարության կամ նմանօրինակ այլ գործերի մասին: Օրինակ՝ Նոր Նորք վարչական շրջանում, «Կաթնաղբյուր-Երևան» և «Ապարան-Երևան» մայրուղային ջրատարների վրա, «Հացառատ» պոմպակայանում: Մակայն տարվող աշխատանքներին համընթաց, աստիճանաբար ներկայացվում է համակարգում անցումը դեպի նոր տեխնիկայի կիրառում և նոր տեխնոլոգիաների ներդրում:

Այս թեմայով հրապարակուժները ապրիլին վերաբերում են հոսակորուստ փնտրող սարքերի օգտագործմամբ վթարների հայտնաբերմանը՝ Աջափնյակ վարչական շրջանում և «Միսիական» օրվա կարգավորիչ ջրամբարի վերանորոգմանը՝ թաղանթապատման միջոցով: Ավելին, առաջիկայում նախատեսվում են նոր հրապարակուժներ այս կարևորագույն ուղղությամբ նորամուծությունների վերաբերյալ, որը դարձել է Վեոլիա ջուր ընկերության հիմնական գործիքը առաջընթացի ճանապարհին:



Ապրիլին գրանցվել են նաև պաշտոնական կամ ընկերության գործարար համբավին վերաբերող հրապարակումներ:

Դրանցից կարևորը ջրամատակարարման նոր ժամանակացույցն է՝ 2021 թ. մայիսի 1 - 2021թ. սեպտեմբերի 30 ժամանակահատվածի համար, որը հանրությանը ներկայացվեց տասնյակ հազարավոր ընթերցողներ ունեցող 1in.am և tert.am լրատվական կայքերի միջոցով, ի տարբերություն նախկին՝ սահմանափակ տպաքանակով «Ժողովուրդ» օրաթերթի: Ընդ որում, դրան անմիջապես հետևեց Օպերատորի ճշգրտող պարզաբանումն այն մասին, որ սպասարկող բնակավայրերում ջրամատակարարման ռեժիմը փոխվել է անփոփոխ: Տվյալ քայլը բացատրվում է նրանով, որ հանրապետությունում ստեղծված թեժ քաղաքական իրավիճակում հնարավոր էին տարատեսակ մեկնաբանություններ և շահարկումներ ժամանակացույցի հետ կապված:

Նաև լրատվամիջոցներին է հղվել, ինչպես նաև Արմենիա հեռուստաալիքով ռեպորտաժ է հեռարձակվել Տավուշի մարզի Ենոքավան և Սարիգյուղ համայնքներին ցուցաբերած օգնության վերաբերյալ, որոնք, ի դեպ, Վեոլիա Ջուր ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ցանկում չեն: Խոսքը տեղի դպրոցները ջրով ապահովելու մասին է: Այսուհետ աշակերտները ստիպված չեն լինի ամեն օր տնից դպրոց ջուր տանել՝ ամենատարրական հիգիենիկ խնդիրները լուծելու համար:

Որպես պաշտոնական լրատվություն հանրությանը տեղեկացվել է նաև, որ Վեոլիա ջուրն արդեն դարձել է հանրապետության թիվ 27 խոշոր հարկատուն՝ վճարված հարկերի գումարով: Սպառողների շրջանում հետաքրքրություն է առաջացրել նաև տեղեկատվությունը մեզանում ցայտադրյունների քանակի ու սպառվող ջրի ծավալի վերաբերյալ:

Այս բոլոր հրապարակումների մի մասը նաև առաքվել է հանրապետության առաջատար մոտ 60 լրատվամիջոցների: Իսկ երբեմն էլ դրանք, [facebook.com/veolia.armenia](https://www.facebook.com/veolia.armenia)-ից բացի, տեղադրվել են սպառողների հետ Օպերատորի կապի նաև մյուս digital միջոցներում. [Veolia.am](https://www.veolia.am) պաշտոնական կայքում, twitter.com/Veolia_AM և [youtube Veolia Jur](https://www.youtube.com/Veolia_Jur) էջերում:



*ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ*



5.1. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

● Հաշվետու ամսում բաժնի կողմից մշակվել է արտադրական վտանգավոր օբյեկտների տեխանվտանգության փորձաքննությունների իրականացման պլան-ժամանակացույցը:

5.2. COVID-19 ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

● Ամենօրյա ռեժիմով Ընկերության ստորաբաժանուժներից ՈԱԱ բաժնին ներկայացվել են կառուցվածքային ստորաբաժանուժների անձնակազմերի ջերմաչափման և գրասենյակների ախտահանման աշխատանքների վերաբերյալ տվյալները:

● Շարունակվել են Ընկերության ստորաբաժանուժներին տրամադրվել համավարակի տարածման կանխարգելմանն ուղղված անհրաժեշտ անհատական պաշտպանության միջոցներ:


5.3. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ/ՄԵՄԻՆԱՐՆԵՐ

● Շարունակվեց ՈԱԱ բաժնի անվտանգության պատասխանատուի՝ Ջգնաժամային կառավարման պետական ակադեմիայում անցկացված ՀՀ նախարարությունների և գերատեսչությունների աշխատակազմի ստորաբաժանուժների մասնագետների՝ «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում պատրաստվածության բարձրացման հարցերը» թեմայով հնգօրյա դասընթացին մասնակցությունը, որի ավարտին տրվեց հավաստագիր:



● ՈԱԱ Բաժնի պետը մասնակցեց Վեոլիա Գրուպի կողմից կազմակերպված ԿԱԵ Գոտու ապահովության/անվտանգության պատասխանատուների հեռավար սեմինարին:


● Բաժինը Ընկերության Ջրի որակի վարչության տեղամասային և կենտրոնական լաբորատորիաների վարիչների և մյուս աշխատողների համար կազմակերպեց և իրականացրեց «Լաբորատոր անձնակազմին ներկայացվող անվտանգության պահանջներ» հեռավար դասընթացը: Դասընթացին մասնակցեց ընդհանուր թվով 32 աշխատող:



● Բաժինը, հիմք ընդունելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի, ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 247-րդ հոդվածի, ինչպես նաև ՀՀ կառավարության 21/04/2011 թվականի N 529-Ն որոշմամբ սահմանված «Քլորի արտադրության, օգտագործման, պահման և փոխադրման ժամանակ անվտանգության տեխնիկական կանոնակարգի» պահանջները, «Նարեկ» գիտահետազոտական ընկերության հետ համատեղ անցկացրեց Ընկերության թվով 117 աշխատակցի առաջնային և հերթական մասնագիտական որակավորում և գիտելիքների գնահատում և «Առաջին օգնության ցուցաբերման մեթոդները» թեմայով դասընթացներ:




● Առաջնորդվելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի, ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 88-րդ, 247-րդ և 254-րդ հոդվածների, ինչպես նաև Վեոլիա Գրուպի «Վտանգավոր քիմիական նյութերի տեղափոխում, պահեստավորում եվ գործածում» ԲՌԿ ստանդարտի պահանջներով՝ Բաժինը կազմակերպեց և իրականացրեց «Վտանգավոր քիմիական նյութերի հետ աշխատանքին ներկայացվող ԲՌԿ ստանդարտի պահանջներ» առկա դասընթացը Ընկերության Տեխնիկական տնօրինության թվով 117 աշխատակցի համար:



● Ղեկավարվելով ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 254-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 28/08/2003 թվականի 1228-Ն որոշմամբ հաստատված «Ջրահեռացման համակարգերի օգտագործման և հեռացվող ջրերի մաքրման կանոնների» 68-րդ և 77-րդ կետերի, ինչպես նաև Վեոլիա Գրուպի «Աշխատանքներ փակ տարածքներում» ԲՌԿ ստանդարտի պահանջներով, Բաժինը կազմակերպեց և իրականացրեց «Փակ տարածքներում աշխատանքին ներկայացվող անվտանգության պահանջներ» առկա դասընթացը Ընկերության Հարավ շահագործման տնօրինության թվով 20 աշխատողի համար:

Պետք է նշել, որ վերոնշյալ դասընթացները կազմակերպվեցին COVID-19 համավարակի տարածման դեմ ուղղված սանիտարական կանոնների պահանջներին համապատասխան. դասընթացի մեկնարկից առաջ կատարվեց մասնակիցների հեռավար ջերմաչափում, գրանցում և COVID-19 տարածման կանխարգելման վերաբերյալ սանիտարական կանոնների իրազեկում: Դասընթացների ողջ ընթացքում մասնակիցների փոշն պահպանվեց 1,5 մ սոցիալական հեռավորություն, մասնակիցները և դասընթացավարները կրեցին դիմակներ:


2020-2021 թթ. կազմակերպված դասընթացներին/թեստավորումներին (ԴԱՍԸՆԹԱՅ) մասնակցած աշխատակիցների քանակների համեմատական գրաֆիկ



5.4. ՌԻՍԿԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ/ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ

● Բաժնի անվտանգության պատասխանատուներն իրականացրեցին Անվտանգության ստուգայցեր Ընկերության թվով 2 ՀՏԿ-ում: Ստուգայցերի նպատակն էր իրականացնել ռիսկերի գնահատում և կառուցվածքները շահագործող անձնակազմերի կողմից Ընկերությունում հաստատված անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակի մոնիթորինգ:

2021 թ. իրականացված անվտանգության ստուգայցների քանակներն ըստ օբյեկտների



5.5. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀՀ ԱԻՆ-Ի ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՆԵՐԻ ՀԵՏ

● Համաձայն ՀՀ Շիրակի մարզպետի 29.12.2020 թվականի N 429-Ա որոշմամբ հաստատված Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2021 թվականի հիմնական միջոցառումների պլանի և «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի սույն թվականի ապրիլի 21-ին Ընկերության «Հյուսիս» Շահագործման տնօրինության «Շիրակ» շահագործման տեղամասը, ՈԱԱ բաժնի համակարգմամբ, անցկացրեց «Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը» թեմայով Շտաբային ուսումնասվարժանք, որից հետո պատրաստվեց համապատասխան զեկույց և ներկայացվեց Շիրակի մարզպետին:

● Սույն թվականի ապրիլի 23-ին, ՈԱԱ բաժնի համակարգմամբ, Ընկերության «Հարավ» Շահագործման տնօրինության «Կենտրոն» շահագործման տեղամասը մասնակցեց Ա. Սպենդարյանի անվան Օպերայի և Բալետի ազգային ակադեմիական թատրոնում՝ ՀՀ ԱԻՆ Երևաի փրկարարական վարչության կողմից կազմակերպված «Հրդեհաշիջման և փրկարարական աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը» թեմայով Հատուկ տակտիկական ցուցադրական ուսումնասվարժանքին:

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ ԵՎ
ՍԵՐՎԵՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

6.1. Համակարգչային ցանց

Ապրիլ ամսվա ընթացքում IT բաժնի կողմից իրականացված հիմնական աշխատանքների ցանկը ներկայացված է ստորև՝

- Մասնակցություն է ցուցաբերվել “Վեոլիա” Խմբի IT անվտանգության բաժնի կողմից կազմակերպված IT անվտանգության խորհրդի ժողովին: Քննարկվել են արդիական SS վտանգները և խմբի SS անվտանգության նախագծերը:

- Ազատ համակարգիչների և մոնիտորների ցանկից առանձնացվել և բաշխվել են սարքավորումների մի մասը: Փոխարինվել են փչացած մոնիտորներ և հնամաշ համակարգիչներ կազմակերպության աշխատակիցների մոտ:

- Իրականացվել է Linux օպերացիոն համակարգով աշխատող սերվերների արդիական թարմացումների տեղադրումը:

- Իրականացվել է Windows օպերացիոն համակարգով աշխատող սերվերների արդիական թարմացումների տեղադրումը:

- Ստեղծվել են նոր օգտանուններ veolia.com G Suite համակարգում «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի աշխատակիցների համար:

- Մեկնարկվել է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի բջջային համարների ճշգրտման գործընթացը: Կասեցվել են չօգտագործվող համարները, իդենտիֆիկացվել են համարների օգտագործողների տվյալները, փոփոխվել են համարներին հասանելի սահմանափակումները և փաթեթները:

- Ներդրվել է հաճախորդների սպասարկման գրասենյակների համար հերթերի կառավարման EarlyOne համակարգը Աբովյան 66ա հասցեում գործող սպասարկման գրասենյակում:

- Իրականացվել է EarlyOne համակարգի հավելյալ կարգավորումներ՝ աշխատանքային գործընթացի օպտիմալացման համար:

- EarlyOne բջջային հավելվածում ավելացվել է “Վեոլիա Ջուր” ՓԲ ընկերությունն առցանց հերթագրվելու համար:

- Մասնակցություն է ցուցաբերվել “Վեոլիա” Խմբի IT անվտանգության բաժնի կողմից կազմակերպված Acunetix ծրագրային ապահովման օգտագործման ուսուցման ժողովների ցանկին:

- Իրականացվել է լարանցման աշխատանքներ Ավան, Բաբաջանյան 3/1 հասցեում խափանված հեռախոսագծերի վերագործակցման համար:

- Իրականացվել է Windows 7 օպերատիվ համակարգով աշխատող համակարգիչների օպերատիվ համակարգի թարմացում մինջև վերջին հասանելի Windows 7 թարմացումներ:

- Մեկնարկվել է EDR ծրագրային ապահովման տեղադրումը կազմակերպության բոլոր համակարգիչների և սերվերների վրա:

- Մեկնարկվել է BeyondTrust ծրագրային ապահովման հնարավոր ներդրման և կրթաման ուսումնասիրությունը: Իրականացվել է մի շարք հանդիպումներ BeyondTrust ընկերության տեխնիկական և վաճառքի մասնագետների հետ, ինչպես նաև “Վեոլիա” Խմբի այն երկրների IT մասնագետների հետ, որոնք արդեն իսկ օգտագործում են այդ ծրագրային համակարգը:

- “Վեոլիա” Խմբի IT անվտանգության կողմից ձեռնարկված “Top 25” ինդուստրիալ համակարգերի կիրժեռ անվտանգության նախագծի շրջանակներում կազմակերպվել է մի շարք հանդիպումներ նախագծի իրականացման համար հետագա քայլերի քննարկման նպատակով:

- Ջրաչափական սարքերի հեռավար կառավարման մոդուլի համար մրցույթի շրջանակներում տրամադրվել է հավելյալ տեղեկատվություններ և ճշգրտումներ մրցույթին մասնակցող կազմակերպությունների կողմից հարցումների հիման վրա:

- Մեկնարկվել է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-իք. Երևան, Շենգավիթ Արտաշիյան պողոտա 41 շենք, 51 տարածքում գնտվող նոր տեղամասի կառուցման աշխատանքները՝ ներկայացվել է հայտ օպտիկամանրաթելային կապի ապահովման համար, ստեղծվել է ցանցի կառուցման նախագիծ և ներկայացվել է գնման հատեր համապատասխան նյութերի գնման համար:

- Իրականացվել է Շիրակի 94 հասցեում գտնվող հանդիպումների դահլիճի ակուստիկ հատկությունների ուսումնասիրություն, դահլիճի չափագրում և ակուստիկ խնդիրների հնարավոր լուծումների ուսումնասիրություն: Ղեկավար անձնակազմին ներկայացվել է անհրաժեշտ աշխատանքների մեկնարկի համար մոտավոր հաշվարկներ:

- Ստեղծվել է SCADA ինդուստրիալ համակարգի առկա ցանցային կառուցվածքի պատկերավոր նկարագրություն և մեկնարկվել է “Վեոլիա” Խմբի IT անվտանգության կողմից ձեռնարկված “Top 25” ինդուստրիալ համակարգերի կիրժեռ անվտանգության նախագծի շրջանակներում այդ կառուցվածքի փոփոխման նախնական պատկերավոր նկարագրման ստեղծումը:

- Իրականացվել է մի շարք հանդիպումներ կապի ծառայությունների մատուցող կազմակերպությունների ներկայացուցիչների հետ իրենց կողմից տրամադրվող ծառայությունների նպատակային օգտագործուման և սակագների ուսումնասիրություն և հնարավոր փոփոխությունների քննարկման համար:

- Սպասարկվել է մոտ 370 գանգ IT բաժնի աջակցության համարով:

- Գրանցվել և փակվել է մոտ 290 աջակցության տոմս:

6.2. Ինտերակտիվ համակարգ

Ապրիլ ամսին կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Կատարվել են մի շարք ծրագրային թարմացումներ ինտերակտիվ համակարգում:

- Առևտրային տնօրինության համար շահագործման է հանձնվել Ջրաչափերի փոխարինման մոդուլը: Այդ կապակցությամբ ուսուցողական դասընթաց է կազմակերպվել բոլոր շահագրգիռ անձանց և ծրագիրը շահագործողների հետ:

- Բանակցություններ են տարվել «Էկենգ» ընկերության ներկայացուցիչների հետ Էլեկտրոնային ստորագրությունն ընկերությունում ներդնելու ուղղությամբ, ինչպես նաև ծրագրային կապուղի՝ Էլեկտրոնային ստորագրության վավերականությունը ստուգելու համար:

- Բանակցություններ են տարվում «Բիլայն», «Վիվադել», «Յուքոմ» և

- «Ռոստելեկոմ» օպերատորների հետ՝ բջջային կապի ծառայությունների մատուցման անցումը մեկ օպերատորի, ինչպես նաև մի շարք նորամուծություններ, որոնք դեռևս չեն չեն կիրառվել Հայաստանում: Դրանով հետապնդում ենք գնային քաղաքականության փոփոխում և խնայողությունների ապահովում:

- Ճշգրտումներ են կատարվել առկա բջջային համարների իդենտիֆիկացման և գույքագրման գործընթացի ապահովման ուղղությամբ: Ինտերակտիվ համակարգում ներդրվել է վերոնշյալ գործընթացի կառավարման նոր համակարգ:

- Հանդիպում է տեղի ունեցել «Մի Փեյ» ընկերության հետ՝ որպես վճարային գործընկեր ներգրավվելու ուղղությամբ: Քննարկվել է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հաշիֆների առցանց վճարման հնարավորությունը՝ MOONS դրամապանակ բջջային հավելվածի միջոցով:

- Լոկատոր ընկերության հետ համատեղ քննարկում է տեղի ունեցել սպասարկման ծառայության որակի բարելավման, ինչպես նաև կիբեռ անվտանգության ընթացակարգերի պահպանման ուղղությամբ:

- SS վարչության կողմից կատարվել է ուսունասիրություն ջրաչափերի հեռակառավարվող տեսականն իրականացնելու նպատակով:

- Ակտեր Ինտերակտիվ համակարգի միջոցով՝ ապօրինությունների դեմ պայքարի ամբողջ գործընթացը համակարգվում է, ուստի ստորև ներկայացվում է ապրիլ ամսվա ապօրինությունների դեմ պայքարի ցուցանիշները.

Խախտման արձանագրություն			
Տեղամաս	Ընդամենը		
	քանակ	հազ. իս/մ	մլն. դրամ
Հյուսիս	7	6.5	1.1
Էրեբունի	7	4.0	0.7
Շենգավիթ	13	5.1	0.8
Կենտրոն	7	4.0	0.7
Արաբկիր	6	3.6	0.6
Մաշտոց	17	10.0	1.7
Շահումյան	24	10.9	1.8
Քանաքեռ-Զեյթուն	2	0.7	0.1
ԱՎԲ	98	94.8	15.3
Լոռի	1	0.5	0.1
Ծիրակ	26	8.3	1.4
Արթիկ	3	1.5	0.3
Արարատ	35	3.3	0.5
Արմվյան	35	26.9	4.2
Հրազդան	10	4.8	0.4
Ալավերդի	1	1.2	0.2
Արտաշատ	27	2.9	0.5
Բերդ	1	0.2	0.0
Գավառ	13	2.7	0.4
Դիլիջան	2	0.9	0.1
Եղեգնաձոր	1	0.5	0.1
Էջմիածին	5	8.9	1.4
Թալին	2	12.9	0.9
Իջևան	11	0.9	0.2
Կապան	1	0.5	0.1
Մասիս	17	5.7	0.9
Նոյեմբերյան	1	0.3	0.0
Արմավիր	5	3.1	0.5
Սևան	5	0.9	0.1
Աշտարակ	14	2.4	0.4
Զարենցավան	4	3.1	0.5
Մյուսիս	2	1.0	0.2
Ստեփանավան	6	2.5	0.5
Ընդամենը	409	235.7	36.6

● Լաբորատոր փորձաքննություններ (ջրաչափերի ապահավաքակցման գործառույթներ). Ապահավաքակցման և լաբորատոր փորձաքննությունների եզրակացությունների ամբողջ գործառույթները համակարգվում է ինտերակտիվ համակարգի միջոցով, ուստի ստորև ներկայացվում է ապրիլ ամսվա լաբորատոր եզրակացությունների ցուցանիշները.

Լաբորատորիա				
Տեղամաս	Միջամտություն		Մնասարքություն	
	քանակ	հազ. խ/մ	քանակ	հազ. խ/մ
Հյուսիս	16	6.06	49	0.53
Էրեբունի	12	4.67	89	0.87
Ծեղկավիթ	13	8.65	82	0.55
Կենտրոն	17	16.96	60	0.66
Արաբկիր	5	2.66	67	0.46
Մաշտոց	17	9.71	69	3.29
Շահումյան	18	8.68	68	1.02
Քանաքեռ-Զեյթուն	6	4.67	46	0.27
Լոռի	11	1.45	44	0.20
Շիրակ	20	4.34	62	0.24
Արթիկ	6	2.19	31	0.16
Արարատ	3	0.46	17	0.12
Աբովյան	7	2.13	46	0.32
Հրազդան	15	2.42	27	0.07
Մլավերդի	1	0.08	22	0.08
Սյունք	2	1.55	4	0.02
Սպարան		-	1	0.00
Արտաշատ		-	6	0.04
Գավառ		-	9	0.06
Գորիս	1	0.26	7	0.02
Դիլիջան		-	4	0.03
Եղեգնաձոր		-	18	0.12
Էջմիածին	4	1.10	20	0.09
Թալին	1	0.64	4	0.00
Իջևան	3	0.13	3	0.00
Կապան	7	1.80	21	0.07
Ճամբարակ	1	0.06	1	0.01
Մասիս	5	2.47	8	0.07
Մարտունի		-	1	0.01
Մեղրի	1	0.26		-
Նոյեմբերյան	1	0.26		-
Արմավիր	9	2.28	105	0.73
Ջերմուկ		-	6	0.03
Սևան	2	0.37	6	0.01
Վայք		-	2	0.01
Սյուտարակ	5	0.82	26	0.07
Միասիան		-	1	0.00
Սպիտակ	2	0.19	7	0.04
Ստեփանավան	3	1.29	7	0.09
Տաշիր		-	1	0.00
Ընդամենը	214	88.61	1047	10.40



«ՎԵՈՒԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ
ՀՀ, 0014, ք.երևան, Ն.Ադոնցի 6/1
ՀՀ, 0025, ք.երևան, Արովյան 66ա
E-mail: info@vjur.am